

«ԱՂՈՒԱՆԻՑ» ԿՈՉՎՈՂ ԾԱԾԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՏԱՂՁԸ

Պատմական գիտությունների դոկտոր Աս. Մնացականյանի «Աղուանից» գրքեր և ոչ թե «աղավնագրեր» խորագրով ուշագրավ հոդվածում («Արարեր» հաս. հիտ.» 1970, № 10), առաջ է քաշված հիմնականում երկու հարց. ա) քննարկվող տառերի կոչումն ըստ միջնադարյան աղբյուրների և բ) դրանց կապը բուն աղվանական գրքերի հետ: Այդ առթիվ հարկ ենք համարում նշել, որ մեր խնդիրն է եղել քննության առնել աղվանական համարվող որոշ բնագրեր և ցույց տալ, որ դրանք հայերեն են և թյուրիմացաբար են վերագրվել աղվանականին: Հաջողվե՞լ է արդյոք մեզ հասնել մեր նպատակին. ահա այս մասին է, որ կուզենայինք լսել մեր լծակից ընկերների ուղղամիտ և գիտականորեն փաստարկված գիտողությունները:

Աս. Մնացականյանի առաջ քաշած առաջին հարցի առթիվ՝ թե հայկական ծածկագրերի վերնագրերում հիշված «Աղուանական» է ճիշտ, թե՞ «Աղվանականը», քննարկվող մեր հոդվածի նպատակից դուրս համարելով, բերել ենք միայն ակադեմիկոս Հ. Աճառյանի հայտնած հետևյալ կարծիքը. «Աղավնաղիւ բառը (աղավնիի գիր), որ ըստ իս բուն «ծածկագիր» նշանակությունն ունի, ճիշտ այնպես, ինչպես տներն ծածկալեզվի համար ճճճճ լեզու, ազուսվի լեզու կամ կոկեբեբե: Այս աղավնագիր բառը հետո շփոթվելով, դիտմամբ կամ պատահմամբ, դարձեր է աղվանից գիր, և այս անունով ալ հիշված են ծածկագրերը մեր ձեռագրերում մեջ տեղ-տեղ»¹: Ըստ որում, մեր հոդվածում այդ հարցը մենք առանձնահատուկ քննարկման նյութ չենք դարձրել, չենք ասել, թե մենք ընդունում ենք այն, թե մերժում: Հետևապես տեղին չէ Աս. Մնացականյանի մեզ ուղղած դիտողությունը, թե սխալվել ենք հետևելով Աճառյանին, որովհետև Աճառյանի ժամանակ շատ փաստեր դեռ հայտնի չէին և այլն: Բայց քանի որ այդ հարցն առաջ է քաշված Մնացականյանի կողմից, չենք խուսափում այժմ հայտնել մեր կարծիքն այդ մասին:

Իրողությունն այն է, որ մեզ հայտնի «Աղվանական» համարվող բոլոր բնագրերն էլ, բացառությամբ Մինգեչաուրի պեղումներից հայտնաբերված արձանագրությունների և Մաշտոցի անվան մատենադարանի № 7117 ձեռագրի բնագրերից, որոնք գրված են իրոք բուն աղվանական տառանիշներով, մյուսները հայկական ծածկագրեր են: Մենք, իհարկե, դժվարանում ենք ցույց տալ թեկուզ մի բառ, որ այդ տառանիշներով գրվածը հայկական ծածկագիր չլինի: Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրերում մեզ հայտնի է արհեստագործական բովանդակությամբ մի բնագիր, որն ամբողջապես զաղտնագրված է այդ ծածկագրով: Եթե մենք Աճառյանի հայտնած կարծիքը նույնիսկ համարենք հնացած և չընդունենք, որ «աղուանական» բառն աղավաղվել է «աղվա-

1 Հ. Աճառյան, Հայոց գրերը, Վիեննա, 1928, էջ 478: (Մեր հոդվածում՝ «Արարեր», 1970, № 3, էջ 58, այս քաղվածքը մեջ է բերվել որոշ շեղումներով, իսկ 15-րդ ծանոթագրության աղբյուրի թվականը պետք է լինե՛ր 1967):

նականի», դարձյալ իրականը կմնա այն, որ մեղ հասած «աղվանական» բնա-
յրերը հայկական ծածկագրեր են, և այն գաղտնագրողներն «աղվանական»
ասելով նկատի են ունեցել ծածկագրություն: Աս. Մնացականյանը հակառակն
սուպալույսով փաստեր չի բերում, ուստի Աճառյանի կարծիքը մերժելու հիմքեր
չունենք:

Աս. Մնացականյանի առաջ քաշած երկրորդ հարցում, մեր կարծիքով,
նկատելի է որոշ շփոթություն. հայկական և աղվանական գրերի աղգակցու-
թյան հարցը շփոթված է աղվանական գրերի և աղվանական համարվող ծած-
կագրերի հարցի հետ: Դրանք միանգամայն տարբեր հարցեր են: Եվ այս է եղել
սլատնաուր, որ մեր նախորդ հոդվածում չենք ուղեղ համաձայնվել Աս. Մնացա-
կանյանի անցյալում հայտնած կարծիքի հետ: Իր այդ տեսակետն ամրացնե-
լու համար, նա դիմել է ակտդ. Ա. Շանիձեի հեղինակությանը, որը միանգա-
մայն հակառակ կարծիքի է:

Հին հայկական և աղվանական գրերի աղգակցության հարցին մենք անդրա-
դարձել ենք մեր «Дешифровка надписей кавказских агван» գրքում² և
յուրյց տվել աղվանական գրերի սերտ աղգակցությունը հայկականի և վրացա-
կանի հետ: Մեղ համար, որպես հնագրությամբ զբաղվող մասնագետի, անվի-
ճելի է, որ հայկական, վրացական և աղվանական գրերը ձևված են մի սկզբուն-
քով: Մեր նշված աշխատության մեջ մենք մատնացույց ենք արել ոչ թե աղ-
վանականի և հայկական տառանիշների լուծ 6 տառաձևի նմանությունը,
որոնց վրա ուղում է հիմնվել Աս. Մնացականյանը, այլ՝ քսան և վեց տառի:
Այդ քաջ հայտնի է Աս. Մնացականյանին, և նրա վերցրած վեց տառանիշներից
հինգն անփոփոխ բերված են մեր այդ աղյուսակից: Հայկական և աղվանական
այդ տառերն են՝ հաջորդաբար.

Կ Լ Ն Յ Ծ Զ Փ Կ Ք Գ

Պետք է նշել, որ Մնացականյանը փորձում է, սակայն, սխալ հիմքի վրա
յուրյց տալ այդ տառաձևերի հնչյունական համապատասխանությունը:

Միանգամայն տարբեր հարց է հայկական և «աղվանական» կոչվող ծած-
կագրերի ատաղձի հարցը, նրանց տառանիշների նմանությունը աղվանական
գրության հետ: Այս խնդրի պարզաբանման համար անհրաժեշտ է դիմել ոչ թե
տառանիշների պատահական նմանություններին, այլ աղբյուրագիտական
լուրջ քննարկման ենթարկել «աղվանական» համարվող տառանիշները բուն
աղվանական տառանիշների հետ, ուսումնասիրել նրանց գծագրական ձևերը և
հնչյունական արժեքները, այլապես 52 տառանիշներից բաղկացած աղվանա-
կան այբուբենի մեջ դժվար չէ գտնել մի քանի նմանաձև տառանիշներ՝ ցանկա-
ցած այբուբենից:

Աղվանական ծածկագրության ատաղձը գտնելու ուղղությամբ մեր կատա-
րած աղբյուրագիտական ուսումնասիրությունները մեղ բերել են հետևյալ եղ-
րակացության, որը հակիրճ անհրաժեշտ ենք համարում բերել ստորև.

1. Աղվանական համարվող ծածկագրերի տառանիշների քանակը և տա-
ռաշարքը նման է հայկականին, և նրանք կապ չունեն բուն աղվանականի հետ:

² Ա. Դ. Աбрамян, Дешифровка надписей кавказских агван, Ереван, 1964,
էջ 24—35:

2. Աղվանական համարվող ծածկագրության այբուբենի վերջում կցված է ուշ դարերում հայկական այբուբենի վրա ավելացված «և», «օ» և «ֆ» տառերը, որոնք անվիճելիորեն ապացուցում են, որ նշված ծածկագրությունը հորինվել և գործածության մեջ է դրվել ուշ դարերում:

3. Եվ, վերջապես, այդ ծածկագրության նշանագրերը ծագում են հայկական ուշ շրջանի բոլորգրից: Այդ դժվար չէ նկատել ստորև բերված տառանիշների համեմատությունից:

Բ	բ	— թևը կտրել է և գլխիկը միացրել.
Գ	գ	— թևը կտրել է.
Ե	ե	— ձախ թևը կտրել է և գլխիկը միացրել.
Ը	ը	— մեջքի սյունագիծը կտրել է.
Թ	թ	— գլխիկը միացրել է.
Ճ	ճ	— գրեթե անփոփոխ.
Լ	լ	— ձախից ելուն է ավելացրել.
Կ	կ	— գրեթե անփոփոխ.
Ղ	ղ	— ներքևից կտրել է և վրան երկու կետ գրել.
Ճ	ճ	— շուռ է տվել.
Տ	տ	— փոքր-ինչ թեքել է.
Վ	վ	— ծայրերը միացրել է և եռանկյունի ստեղծել.
Զ	զ	— գրեթե անփոփոխ.
Զ	զ	— մեջքից կտրել է.
Կ	կ	— փոքր-ինչ ձևափոխել է.
Զ	զ	— մեջքից կտրել է.
Լ	լ	— ձևափոխել է.
Վ	վ	— վերևում կլոր է ավելացրել.
Տ	տ	— Միացրել է ծայրերը և պռակեցրել.
Վ	վ	— փոքր-ինչ թեքել է.
Փ	փ	— գրեթե անփոփոխ.
Կ	կ	— ձևափոխել է.
Ե	ե	— գլխիկը կլորացրել է և «ա» միացրել.
Օ	օ	— աջ կողքից ստորակետ է իջեցրել
Ֆ	ֆ	— գրեթե անփոփոխ:

Համեմատության համար մենք վերցրել ենք աղվանական համարվող ծածկագիր այբուբենի Մաշտոցի անվան մատենադարանի № 3124 ձևագրի բնագիրը, որը մեղ հայտնի այդ խմբի հնագույնն է: Նրանից շատ քիչ են տարբերվում մյուսները, որը դժվար չէ նկատել մեր հոգվածում հրապարակված բնագրերի համեմատությունից: Ըստ որում, համեմատության մեջ դրված այբուբենն ունի ընդգծված վերնադիր. «Այս է աղուանից այբուբենն»:

Եթե հայկական տառանիշների և աղվանական համարվող ծածկագրերի

տառանիշների նմանությունները լինելին մեկ-երկուսը, գուցե մենք հիմք ունենալինք կասկածելու, բայց այստեղ նմանությունը տառացի է և ընդհանուր: Հարբերվող մյուս տառերը, որոնք չենք բերել, նույնպես իրենց հիմքում ունեն հայկական տառանիշների մայրերը: Բացի այդ, նման են ո՛չ միայն տառերի ձևերը, այլ և նրանց հնչյունները: Եվ, վերջապես, հայկական այբուբենի տառաշարի և աղվանական համարվող ծածկագրության տառաշարքի մեջ ոչ մի տարբերություն, տառանիշների հաջորդականության ոչ մի խախտում գոյություն չունի:

Ինչ վերաբերում է Աս. Մնացականյանի աղվանական ծածկագրությունից հոտարնտիր վերցրած և աղվանական համարվող տառանիշներին, ապա նրանց մայրը ևս հայկական են: Դժվար չէ այդ նկատել համեմատությունից.

Կ Կ — պոչ է ավելացրել և ուղղել.

Յ > — անկյունը փոքր-ինչ բացել է.

Տ ∞ — ձայրերը միացրել է և պառկեցրել.

— ≈ — միացրել է «ու»-ն և «ու» տառի հնչունն ստեղծել.

Փ Փ — զրևթև անփոփոխ.

Խ Խ — թերև է փոքր-ինչ դեպի աջ.

Այս տառերի մեջ անկարելի է մաշտոցյան երկաթգիր գրեր փնտրել, քանի որ հնում «յա»-ն զրվում էր «Յ» ձևով, «ա»-ը զրվում էր «Լ» ձևով, կլոր «օ»-ն «ԱԼ» ձևով, «բա»-ն՝ «Բ» ձևով, «կա»-ն՝ «Կ» ձևով:

Ինչ վերաբերում է Աս. Մնացականյանի մեր հոդվածի ամփոփման առթիվ արած այն դիտողությանը, որ ուսում ընթերցողները «պիտի կարծեն, թե» մենք ժխտում ենք Մաշտոցի անվան մատենադարանի № 7117 ձեռագրի և այլնի սլարունակած այբուբենի հարադատությունը, արդարացի չէ: Դրանում դժվար չէ համոզվել հոդվածում կատարած մեր վերապահումից. «Կովկասագիտության մեջ խոսք է եղել մի քանի այլ բնագրերի աղվաներեն լինելու մասին, սրոնց հարադատությունը մերժվել է այլ ուսումնասիրողների կողմից, ուստի չենք ուղղում նրանց վրա կանգ առնելու հոսքը, իհարկե, չի վերաբերում Մաշտոցի անվան մատենադարանի նշանավոր № 7117 ձեռագրի սլարունակած այբուբենին, որի հարադատությունն ընդունել ևս բոլոր աչքի ընկնող կովկասագետները՝ ակադ. Հ. Աճառյանը, ակադ. Ա. Շանիձեն, պրոֆ. Ի. Արուստան և ուրիշներ: Ուստի ամփոփման մի քանի տողի մեջ մեր ասածը վերաբերում է միայն հոդվածում քննարկված բնագրերին և, իրոք, անհաջող ձևակերպումը կարող է տեղիք տալ թյուրակարծության:

Բանասեր Հ. Քյուրտյանի ձեռագրի պարունակած աղվանական այբուբենին մենք չենք անդրադարձել, որովհետև բուն աղվանական գրությունների խնդիրը մեր քննության նպատակից դուրս է հղել: Բացի այդ, Քյուրտյանի ձեռագրի ընդգիրը աղբյուրադիտական տեսակետից մեծ արժեք չունի, քանի որ տարված է, որ այն ընդօրինակություն է № 7117 ձեռագրից:

Վերջում ուզում ենք մեր շնորհակալությունը հայտնել «Լրաբերի» խմբագրությանը, որ սլալմաններ է ստեղծում կովկասագիտական նման հարցերի շուրջ բանավիճելու:

Պրոֆ. Ա. Գ. ԱՐԲԱՆՍՅԱՆ